ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՍՏԱՆԻՍԼԱՎ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲՏԱ նախարարության թվայնացման վարչության փորձագետի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված աշխատանքների վերաբերյալ

1. «Արհեստական բանականության վիրտուալ ինստիտուտ» նախաձեռնության շրջանակում իրականացվել է մասնակցություն ՀՀ կառավարության «Պետության կողմից արհեստական բանականության ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսների հասանելիության տրամադրման փորձնական ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագծի մշակման գործընթացին: Որոշման նախագիծը ուղարկվել է կարծիքի ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն: Կարծիքները ստացվել և ամփոփվել են, որից հետո նախագիծը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն պետական-իրավական փորձաքննության: Նախագիծը ներկայացվել է Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտե և ստացել է դրական դիրքորոշում:

   «Արհեստական բանականության վիրտուալ ինստիտուտ»-ի պաշտոնական կայքի զարգացման ուղղությամբ իրականացվել են աշխատանքներ «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի հետ, ինչպես նաև կայքի տեխնիկական և բովանդակային աշխատանքները՝ համահունչ ««Հենակետ v.1.1.1» պաշտոնական դիզայն համակարգին:

   Իրականացվել են կայքի համապատասխանեցման աշխատանքներ «Վեբ բովանդակության մատչելիության ուղեցույցի» (Web Content Accessibility Guidelines, WCAG 2.1) AA մակարդակի ստանդարտներին:

2. «ԻՄ ԱՅԴԻ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոն հավատարմագրելու վերաբերյալ դիմումի ուսումնասիրության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 24-ի թիվ 1015-Ն որոշմամբ՝ որպես էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոն հավատարմագրվելու վերաբերյալ սահմանված պահանջներին և

Scanned with CamScanner

չափանիշներին համապատասխանության վերաբերյալ աշխատանքների իրականացում:

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի հրամանով ստեղծվել է հանձնաժողով: Տեղի է ունեցել հանձնաժողովի 4 նիստ, որի ընթացքում քննարկվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ներկայացված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոն հավատարմագրելու վերաբերյալ դիմումը: Քննարկումների արդյունքում որոշվել է, որ դիմումը համապատասխանում է ՀՀ կառավարության 2025 թվականի հուլիսի 24-ի թիվ 1015-Ն որոշման պահանջներին և չափանիշներին:

3. Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mullbery» համակարգով հանձնարարված աշխատանքների կատարում: Էլեկտրոնային փոստով ստացված նամակների հետադարձ կապի ապահովում: Ընթացիկ այլ հանձնարարականների կատարում, որոնք բխում են աշխատանքային պարտականություններից՝ համագործակցելով նախարարության համապատասխան վարչությունների հետ:
4. Թվայնացման վարչության ընդհանուր աշխատանքների համակարգում, հանդիպումների կազմակերպում այլ գերատեսչությունների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ, ակտիվ կապ նախարարության տարբեր վարչությունների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ:

ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ՝ **ՀԵՂԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները գնահատում եմ՝

_____:

ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՍՏԱՆԻՍԼԱՎ ՀԱԿՈԲՅԱՆ**

Scanned with CamScanner